ՁՈՐԱՀԱՎԱՔԸ ԵՎ ԳՅՈՒՂԻ ԱՌՕՐՅԱՆ (1941-1945 թթ.)

ՀՈՎՍԵՓՅԱՆ Ն. Ս.

1941 թվականի հունիսի 22-ին սկսված Հայրենական մեծ պատերազմը արմատապես փոխեց Խորհրդային Հայաստանի բնականոն կյանքը: Խորհրդային պետությունը կանգնեց լուրջ դժվարությունների առջև. հարկավոր էր արագորեն վերակառուցել տնտեսությունը, այն հարմարեցնել պատերազմի պայմաններին: Նույն օրը՝ հունիսի 22-ին, կառավարությունը հրավիրեց արտահերթ նիստ, իսկ երեկոյան միութենական հանրապետությունների շրջաններ և քաղաքներ ուղարկվեց կառավարության հայտարարությունը: Եթե Խորհրդային Հայաստանի քաղաքներում պատերազմի մասին լուրը ստացվեց ժամեր անց, ապա գյուղական բնակավայրերում՝ ուշացումով և հանկարծակի: Բանն այն էր, որ խորհրդային գյուղերում 1941 թ. դեռևս կային չլուծված բազում կենսական խնդիրներ՝ բանուկ ճանապարհների և էլեկտրաէներգիայի բացակայությունը, տրանսպորտի, հեռահաղորդակցության (ռադիո, հեռախոս, փոստային համակարգ) անմխիթար վիճակը և այլն:

Դեպքերի ժամանակակից, Գողթ գյուղի բնակիչ, 1924 թ. ծնված Ռ. Հովսեփյանը պատմում է, որ պատերազմի մասին լուրը գյուղում ստացվեց բավական ուշ, քանի որ փոստերի վիճակը բարվոք չէր: Հունիսի 21-ին դեռևս մարդիկ զբաղված էին իրենց առօրյա աշխատանքներով: Շատ գյուղերում արդեն սկսվել էր հացահատիկի բերքահավաքը, խոտհունձը, նախապատրաստվում էին ծխախոտի բերքահավաքին: Հունիսի 22-ին մարդիկ գնացել էին իրենց ամենօրյա աշխատանքին, երբ կեսօրին մոտ շրջկենտրոններից հանկարծ հաղորդվեցին բոլոր գյուղերին, որ Գերմանիան հարձակվել է ԽՍՀՄ-ի վրա: Բոլոր գյուղերի վարչական կենտրոններից մարդիկ դաշտ ուղարկվեցին՝ հաղորդելու աշխատավոր ժողովրդին, որ դադարեցնեն աշխատանքը և տուն վերադառնան:

Պատերազմը մեծ իրարանցում առաջացրեց ամենուրեք: Դեպքերի ականատես Հ. Սիմոնյանը գրում է. «Պատերազմի լուրը ցնցեց ողջ գյուղը: Այդ օրը՝ 1941 թ. հունիսի 22-ին, կոլտնտեսականները դուրս էին եկել հացահատիկի բերքահավաքի «Լայն ճոր» կոչվող հանդամասում: Հաջորդ օրը գյուղամեջ էին հավաքվել տղամարդիկ, պատանիներ ու կանայք, որոնք աղբյուրի մոտ ծանր ու թեթև էին անում սպառնացող վտանգը: Կանայք անիծում էին Հիտլերի մոր արգանդը, որ նման հրեշ ծնեց, տղամարդիկ լուռ սեղմում էին իրենց բռունցքներն ու պատրաստվում զորակոչման»[1]:

Հունիսի 23-ին արդեն «Սովետական Հայաստան» թերթում տպագրվեց զորահավաքի մասին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հունիսի 22-ի հրամանագիրը, որի համաձայն երկրում հայտարարվում էր պատերազմական դրություն և զորահավաք: Զորա-

---

[1] Սիմոնյան Հ., Արին, Ե., 2004, էջ 129:

կոչի էին ենթարկվում զինապարտները՝ ծնված 1905-1918 թթ. ներառյալ: Զորահավաքի սկիզբ էր հայտարարվում հունիսի 23-ը[2]:

Ե՛վ պատերազմին, և՛ զորահավաքի հրամանին խորհրդային ժողովուրդն արձագանքեց միանգամից: Ամենուրեք գումարվեցին հակաֆաշիստական հանրահավաքներ, որոնց ժամանակ ժողովուրդը խոստանում էր, որ ամեն ինչ կանի ատելի ֆաշիզմը ծնկի բերելու և հաղթանակի հասնելու համար: Նման հայտարարություններով էին ողողված «Սովետական Հայաստան», «Ավանգարդ», "Правда", "Коммунист" և բոլոր հանրապետական ու շրջանային թերթերը, որտեղ հնչում էին կոչեր կամավոր մեկնելու ռազմաճակատ և պաշտպանելու հայրենիքը: «Ավանգարդ» թերթի 1941 թ. հունիսի 24-ի համարում ասվում էր. «Մեր երջանիկ երիտասարդները, մեր երկրի արժանավոր զավակները իրենց երկրի արյան մեջ են ներծծել սովետական խանդավառ հայրենասիրությունը, նվիրական սերը դեպի սիրելի հայրենիքը: Այժմ, երբ ֆաշիստական Գերմանիան ավազակային հարձակում է գործել մեր հայրենիքի նվիրական սահմանների վրա, մեր անվեհեր երիտասարդները տասնյակներով դիմում են տալիս կոմիսարիատներին՝ ժամկետից շուտ ընդունվելու Կարմիր բանակի շարքերը: Այդպիսի դիմումները բազմաթիվ են, այդպիսի երիտասարդություն ունեցող երկիրը՝ անպարտելի»[3]:

1941 թ. հունիսի 22-ի երեկոյան արդեն սկսվեց զորահավաքը: Սկզբում զորահավաքի էին ենթարկվում 1905-1918 թթ. ծնվածները, հետագայում բանակ զորակոչվեցին նաև 1919-1926 թթ., ապա նաև 1895-1904 թթ. ծնվածները[4]:

Պատերազմի սկզբին զանգվածային բնույթ ընդունեց կամավորական շարժումը: Զինվորական կոմիսարիատները, աշխատելով գիշեր ու ցերեկ, չէին հասցնում մարդկանց փաստաթղթերը ձևակերպել և ճանապարհել. շատերն էին դիմում բանակ կամավոր մեկնելու համար: Միայն պատերազմի առաջին երեք ամսում կամավոր ռազմաճակատ մեկնեց 20000 կոմերիտական[5]: 1941 թ. նոյեմբերին տեղի ունեցած ՀԿ(բ)Կ Կենտկոմի IX պլենումում հանրապետության զինկոմ Ասատրյանը զեկուցում էր. «Տասնյակհազարավոր զինապարտներ ներկայանում էին հավաքակայաններ առանց կանչի և առանձին հավաքակայաններում առաջին օրերին բանակ մեկնելու համար հավաքվում էին 7000-10000 մարդ: Զինվորական կոմիսարիատների ապարատները մոբիլիզացիայի առաջին երկու օրը ֆիզիկապես ի վիճակի չէին կատարելու բոլոր աշխատանքները»[6]:

Խորհրդային գյուղերում ինչպես հանկարծակի էր պատերազմի մասին լուրը, նույնքան հանկարծակի էլ սկսվեց զորահավաքը:

Դեպքերի ժամանակակից Վ. Միսակյանը գրում է. «Մենք սովորականի պես, հունիսի 23-ի առավոտյան գնացել էինք մեր գործին:

---

[2] Տե՛ս Սովետական Հայաստան, 23.VI.1941:

[3] Տե՛ս Ավանգարդ, 24.VI.1941:

[4] Арутюнян А., Погосян Т. Р. Вклад армянского народа в победу в Великой Отечественной войне (1941-1945), Е., 2010, с. 59.

[5] Տե՛ս Պողոսյան Վ., Ալաշկերտից ներքին Գետաշեն, Ե., 1989, էջ 83:

[6] Նշվ. աշխ., էջ 83:

Մեզ հետ աշխատող բանվորների մի մասը այդ օրն արդեն գործի չէր եկել: Պարզվեց, որ նախորդ օրը երեկոյան, արդեն նրանց կանչել էին զինկոմիսարիատ: Այդ օրը, ճիշտ է, մենք աշխատեցինք, բայց մտահոգված, իսկ մի քանի օր անց արդեն աշխատողները միայն մենք էինք՝ դպրոցականներս, իսկ հիմնական աշխատողներն արդեն զորակոչվել էին բանակ»[7]:

1941 թ. հունիսի 29-ին կառավարության ընդունած դիրեկտիվով սահմանվեցին խորհրդային ժողովրդի խնդիրները: Օրվա հրամայականը «Ամեն ինչ ռազմաճակատի համար, ամեն ինչ հաղթանակի համար» լոզունգն էր: Մի քանի օր անց՝ 1941 թ. հուլսի 3-ին, «Սովետական Հայաստան» թերթում տպագրվեց նաև Ի. Վ. Ստալինի ելույթը՝ ուղղված խորհրդային ժողովրդին. «Մենք պետք է անհապաղ մեր ամբողջ աշխատանքը վերակառուցենք ռազմական ձևով՝ ամեն բան ենթարկեցնելով ռազմաճակատի շահերին և թշնամու ջախջախումը կազմակերպելու խնդիրներին»[8]:

Այդ կոչի համաձայն՝ Խորհրդային Հայաստանի բոլոր քաղաքներում, շրջանների կուսակցական կազմակերպություններում տեղի ունեցան խորհրդակցություններ: Ամեն տեղ միաբերան որոշվեց բերքահավաքը կատարել բացառապես ժամանակացույցով, գերակատարել օրվա պլանը, բոլոր պետական պարտավորությունները կատարել ժամկետից շուտ, կազմակերպել աշխարհազորային ջոկատներ՝ հանրային սեփականությունը պաշտպանելու համար, սահմանել հերթապահություն ֆերմաների, հացահատիկի և մթերքների պահեստների վրա, աշխատավոր ուժերին օգտագործել ռացիոնալ ձևով, հասկահավաքի մեջ ընդգրկել դպրոցականներին և փոխադրական ուժը պահել մոբիլիզացիոն վիճակում: Գյուղխորհրդի նախագահները միաժամանակ պարտավորվեցին ժամանակին կատարել պետական և ֆինանսական հարկերի գանձումը: Կոլտնտեսային վարչությունների վրա խնդիր դրվեց ուշի ուշով հետևել աշխօրի նվազագույնի կատարմանը: Եվ որպեսզի փոքրահասակ երեխա ունեցող մայրերին չկտրեին աշխատանքից, կառավարության հրամանով շտապ կարգով բացվեցին բոլոր մսուր-մանկապարտեզները: 1941 թ. սեպտեմբերի 24-ին տեղի ունեցավ Կոտայքի շրջանի աշխատավորների և դեպուտատների շրջանային խորհրդի գործադիր կոմիտեի նիստը, որտեղ ասվում էր. «Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մի շարք կանայք փոքր երեխա ունենալու պատճառով հնարավորություն չունեն աշխատելու այս կամ այն կոոպերատիվ ձեռնարկությունում կամ կոլտնտեսությունում, առաջարկել ուս. բաժնին ոչ ուշ, քան հոկտեմբերի 1-ից շրջկենտրոնում բացել բոլոր մանկամսուրները»[9]:

Զորակոչի ենթարկվեցին բոլորը՝ առանց խտրության: Ռ. Հովսեփյանը վկայում է, որ տարան ուսուցիչներին, գյուղխորհրդի նախագահներին, դպրոցի տնօրեններին, ֆերմայի վարիչներին, ար-

---

[7] Միսակյան Վ., Խաղողն Արագածի փեշերին, Ե., 2009, էջ 201:
[8] Տե՛ս Սովետական Հայաստան, 3.VII.1941:
[9] ՀԱԱ. Աբովյանի տարածքային ներկայացուցչություն, ֆ. 6, գ. 269, ց. 1, թ. 5:

հեստավորներին, դարբիններին, անասնաբույժներին, բոլորին: Ընդ որում, նրանցից պահանջում էին ստորագրել կամավորի տակ...:

Գյուղի տղամարդիկ ոտքով, հացի ուսապարկը մեջքներին, աչքներում կարոտ, սրտերը վրեժով լցված, բռնեցին ռազմաճակատի ճանապարհը: Սկզբում ոգևորությունը այնքան մեծ էր, որ բանակ էին ճանապարհում դհոլ-զուռնայով ու հաղթանակի կոչերով: Հետագայում, երբ զորակոչերը դարձան պարբերաբար ու կրկնվող, և ռազմաճակատից ստացվեցին առաջին «սև թղթերը», դադարեցին հաղթական կոչերը:

«Այլևս դհոլ-զուռնայով, միտինգներով ու հաղթանակի կոչերով չէին ճանապարհում: Հավաքվում էին կայարանում, կարդում էին անունները, հավաքվածներից բաժանվում էին ուսապարկերով մարդիկ, բարձրանում վագոն, և երբ կանչը ավարտվում էր, գնացքը սուլում էր...»[10]: Զորակոչվածներից շատերն ունեին 6-7 անչափահաս երեխաներ, որոնք մնում էին կանանց խնամակալության հույսին: Այսպես, Կոտայքի մարզի Գողթ գյուղի բնակիչ Կարապետ Ավետիսյանի բանակ զորակոչվելուց հետո կնոջ խնամակալության հույսին մնացին վեց անչափահաս երեխաները: Հարությունն Հակոբյանը, որ յոթ անչափահաս երեխայի հայր էր, նույնպես զորակոչվեց բանակ: Եղան ընտանիքներ, որի ինն անդամներից յոթը մեկնեցին ռազմաճակատ: Այդպիսի օրինակ է Եղեգնաձորի շրջանի Արին գյուղի բնակիչ Սերոբ Հարությունյանի ընտանիքը, որի վեց տղան և աղջիկը կռվել են ֆաշիստների դեմ: Նրանցից վերադարձել են տղան Արամը, և դուստրը՝ Սիրանուշը[11]: Ալավերդու շրջանի Հագվի գյուղից Անուշ Օհանյանը ռազմաճակատ էր ուղարկել իր տասը որդիներին և հինգ թոռներին, իսկ ինքը աշխատանքի էր անցել կոլտնտեսության արտերում[12]:

Եղան ընտանիքներ, որոնք բանակ ճանապարհեցին իրենց տան արական սեռի բոլոր ներկայացուցիչներին և անգամ մինուճար զավակներին, որոնց չվերադառնալու հետևանքով շատ հայկական օջախներ մարեցին: Օրինակ, Գողթի բնակիչ Պետրոսյան Ռափայելը բանակ ճանապարհեց իր հինգ որդիներին, որոնցից չորսը չվերադարձան: Գսեղ գյուղից բանակ մեկնեցին Նիկոլ Քոչարյանի չորս տղաները՝ Գարեգինը, Պատվականը, Արմենակը, Սմբատը, որոնք չորսն էլ չվերադարձան[13]: Տավուշի շրջանի Կարմիրաղբյուր գյուղի բնակիչ Եսայան Գրիգորի չորս որդիները՝ Կարապետը, Գարեգինը, Իվանը, Լևոնը, Ավագյան Հակոբի որդիները՝ Մաթևոսը, Պապինը, Սարգիսը, Մելյան Արշակի՝ Բենիամին, Մովսես, Արամ որդիները նույնպես չվերադարձան[14]: Ռազմաճակատում հերոսաբար զոհվեցին Կապանի շրջանի Վաչագան գյուղի բնակիչ Սիմոն Ղոնյանի հինգ

---

[10] Խաչատրյան Ա., Արարատ, Ե., 1995, էջ 362:
[11] Սիմոնյան Հ., Նշվ. աշխ., էջ 131:
[12] Տե՛ս Սովետական Հայաստան, 1.XI.1941:
[13] Քոչարյան Ս., Դեղ, Ե., 2006, էջ 77:
[14] Մելյան Բ., Կարմիրաղբյուր, Ե., 2001, էջ 234:

որդիները՝ Հակոբը, Հայկը, Արամը, Մուշեղն ու Թևանը[15]: Հայկական շատ գյուղեր զորակոչի հետևանքով գրեթե դատարկվեցին: Օրինակ՝ Մարտունու շրջանի Շողագա գյուղից բանակ մեկնեց բնակչության 19%-ը. 1941 թ. գյուղը ուներ 4300 բնակիչ, որից 371-ը մեկնեց ռազմաճակատ[16]: «Կարմիրազբյուր» գրքի հեղինակ Բ. Մելյանը վկայում է, որ 1941 թվականից Կարմիրազբյուր գյուղը ունեցել է մոտ 2000 բնակիչ, որից բանակ է զորակոչվել 500-ը, այսինքն՝ բնակչության 25%-ը[17]:

Եթե հաշվի առնենք, որ միայն Խորհրդային Հայաստանից, որը պատերազմի նախօրյակին ուներ մոտ 1 մլն 282000 բնակչություն, 1941-1945 թթ. բանակ զորակոչվեց ավելի քան 300000 մարդ, այսինքն՝ ազգաբնակչության ավելի քան 1/4 մասը կամ 25%-ը, ապա պատկերը բավական պարզ է դառնում: Նույնը կարելի է ասել նաև Լեռնային Ղարաբաղի մասին, որտեղից բանակ զորակոչվեց ավելի քան 135000 հայ, ազգաբնակչության ավելի քան 35%-ը[18]: Մի շարք բնակավայրերից զորակոչվածների թիվը կազմել է նույնիսկ բնակչության 38%-ը: Օրինակ՝ Հագրութի շրջանից զորակոչվել է 8267 մարդ, հազար մարդու հաշվով դա 5-6 անգամ ավելի էր, քան ադրբեջանական շրջաններից զորակոչվածների թիվը[19]:

Զորահավաքի հետևանքով կտրուկ փոխվեց գյուղերի սոցիալական պատկերը: Մինչև 1945 թ. ռազմաճակատ մեկնեցին կոլտնտեսությունների բոլոր աշխատունակ տղամարդիկ, որի հետևանքով կոլտնտեսությունում կտրուկ աճեց կանանց տեսակարար կշիռը: Օրինակ՝ Վարդենիսի շրջանի կոլտնտեսություններում, եթե հունիսի 20-ին աշխատում էին 2525 կին, մոտ մեկ ամիս անց նրանց թիվը հասավ 4350-ի[20]: Եթե Ներքին Ադյաման գյուղի կոլտնտեսությունում 1941 թ. աշխատունակ տղամարդկանց թիվը 461 էր, ապա 1942 թ. այդ թիվը նվազեց՝ հասնելով 189-ի[21]: Եվ վերջապես կոլտնտեսային արտադրության մեջ կանանց և անչափահասների մեծ մասնակցության մասին են վկայում հետևյալ փաստերը. եթե 1940 թ. 146000 աշխատունակ կանանցից 133000 էր ընդգրկված գյուղատնտեսական աշխատանքների մեջ, ապա 1942 թ. 150000-ից՝ 147000-ը, իսկ անչափահասներից 1940 թ. 86000-ից 64000-ը, 1942 թ.՝ 86000-ից 78000-ը[22]:

---

[15] Մկրաչյան Ա., Կապանցիները Հայրենական մեծ պատերազմում, Ե., 1998, էջ 302:

[16] Սարգսյան Դ., Շողագա, Ե., 2002, էջ 165:

[17] Մելյան Բ., նշվ. աշխ., էջ 234:

[18] Арутюнян А. Участие воинов армян Нагорного Карабаха и Северного Арцаха в Великой Отечественной войне Советского Союза (1941-1945), Е., 2010, с. 6.

[19] Տե՛ս Աբրահամյան Հ., Մարտնչող Արցախ (1923-1985), գիրք Բ, Ե., 2005, էջ 115:

[20] Տե՛ս Սովետական Հայաստան, 13.VII.1941:

[21] Տե՛ս Պողոսյան Վ., նշվ. աշխ., էջ 84:

[22] Գրիգորյան Գ., Սովետական Հայաստանի կոլտնտեսային գյուղացիությունը Հայրենական մեծ պատերազմի տարիներին (1941-1945), Ե., 1979, էջ 33:

Տղամարդկանց բացակայության պայմաններում գյուղատնտեսական բոլոր աշխատանքները ծանրացան կանանց, աղջիկների, ծերերի ու դպրոցահասակ երեխաների ուսերին: Նրանք դարձան մաճկալ, կալվոր, հոտաղ, հնձվոր, սայլապան ու անասնապահ:

Կանայք ամեն տեղ էին՝ դաշտում, ֆերմայում, աշխատում էին վաղ լուսաբացից մինչև ուշ երեկո: Ռազմաճակատ մեկնած ամուսնու փոխարեն աշխատում էր կինը, և նրան թվում էր, թե որքան լավ աշխատի, այնքան պատերազմը շուտ կվերջանա[23]:

Գութանի ու արորի մաճ բռնելը, հունձը դարձել էին կանանց մենաշնորհ: Աշխատում էին սոված ու բոկոտն՝ կատարելով ծանր ու հոգեմաշ աշխատանք: Քանի որ պատերազմի տարիներին հայտնի պատճառներով խիստ կրճատվել էր գյուղմեխանիզացիան, այդ իսկ պատճառով էլ գյուղատնտեսական աշխատանքները հիմնականում կատարվում էին առանց մեխանիզացիայի, ձեռքի ուժով, իսկ աշխատուժը չէր բավարարում: Դա էր պատճառը, որ 1941 թ. հուլիսից սկսվեց հացահատիկի գիշերային հունձը՝ ձեռքով: Մարդիկ, աշխատելով գիշերները, հազիվ էին հասցնում ցանել, հնձել, բերքը դաշտից տուն բերել, կալսել և գյուղատնտեսական մյուս աշխատանքներն անել:

Մարտունու շրջանի Գեղհովիտ գյուղի բնակիչ Խաչիկ Սաֆարյանը, որը 1942-1943 թթ. եղել է նույն գյուղի կոլտնտեսության նախագահ, հիշում է. «Պատերազմի դաժան տարիներին մենք աշխատել ենք մեծահասակ մարդկանց, կանանց և երեխաների հետ: Ցուրաքանչյուր մեկ հեկտար ցանքատարածությունից ստանում էինք 6-7 ցենտներ հացահատիկ: Պետական պլանը հանձնելուց և սերմացուն առանձնացնելուց հետո մնացած հացահատիկը բաժանում էինք աշխօրին մոտավորապես 2-3 կգ սահմաններում: Կոլտնտեսության ամբողջ աշխատանքը կատարվում էր ձեռքով: Հողը մշակում էինք եզան գութանով, արորով, հացի կամ խոտի հունձը կատարվում էր գերանդիով, փոխադրում էինք երկու ակնանի եզան սայլով: Ձկային տրակտորներ ու կոմբայն, եղածն էլ չէր աշխատում: Այդպիսի խլամների վրա հույս գնել չէինք կարող: Դաշտավարական աշխատանքները կատարվում էին մարդկանց ձեռքի ուժով, այն էլ մեծահասակների, կանանց ու դպրոցահասակների»[24]:

Կանայք հունձ էին անում և՛ ցերեկը, և՛ գիշերը, կալսում էին հացահատիկը և պահեստ տեղափոխում բերքը, ձմռան ամիսներին ձյունից մաքրում էին ճանապարհները՝ տրանսպորտի ու փոստի տեղափոխման հնարավորություն ստեղծելու նպատակով: Կատարում էին նաև ուրիշ ծանր աշխատանքներ, որոնք սովորական պայմաններում միայն տղամարդիկ էին անում:

Կանանցից աշխատում էին հետ չմնալ սպիտակահեր, կորամեջք ծերունիները, որոնք, լարելով իրենց վերջին ուժերը, որդիների ու թոռների կորստյան կսկիծը սբտներում, անիծելով ու հայհոյելով Հիտլերին, աշխատում էին: Մարտունու շրջանի Ներքին Գետաշեն

[23] Պողոսյան Վ., Գեղհովիտ, Ե., 1996, էջ 323:
[24] Նույն տեղում, էջ 344:

գյուղի 4-րդ բրիգադում փաստացի հաշվվում էր 70 աշխատող, որոնց մեծ մասը ծերացած, աշխատանքի անընդունակ մարդիկ էին՝՝: Փարաքարի կոլտնտեսությունն ուներ 600 աշխատող, որոնցից 350-ը մեծահասակ էին, իսկ 250-ը՝ պատանի՝՝:

Կանանց ու ծերերի հետ աշխատում էին պատանիներն ու աղջիկները, որոնց ծանր պայմաններն ու գոյատևման գիտակցումը շուտ հասունացրին. 12-15 տարեկան պատանիների ուսերին էր ընկել աշխատանքի ծանրության մեծ բաժինը: Նրանք գերանդիով հունձ էին անում, խուրձ կապում, սայլավորություն անում, աշխատում պաշտպանական նշանակության կառույցներում:

Պատերազմն ու զորահավաքը իրենց հետքը թողեցին գյուղացու ապրելակերպի ու կենսապայմանների վրա: Պարբերաբար կրկնվող զորակոչերի, կառավարության խիստ հարկային քաղաքականության հետևանքով կտրուկ ընկավ բնակչության կենսամակարդակը: Ամենուրեք սով էր, որը առավել սուր արտահայտվեց Հայաստանի լեռնային գյուղերում: Մարտունու շրջանի Արծվանիստ գյուղի բնակիչ Մ. Ասատրյանը դրում է. «Մարդիկ հյուծվելուց սկզբում ուռչում էին, հետո դառնում ոսկոր ու կաշի և մեռնում: Կենդանի մնացածները մի կերպ աշխատում էին օրական մի քանի գրամ հաց ստանալու հույսով, իսկ երբ մեկնումեկին մի քանի կիլոգրամ ժմեխի անդորրագիր էին տալիս, պահեստապետ Հովհաննես Խալաթյանը թուղթը երկար ու բարակ շուռումուռ տալուց, կարդալուց հետո կատակի էր տալիս»,- «Էստեղ հո խարդախ բան-ման չկա՞»: Զորանում էր թղթի տիրոջ թուքը, մտածելով հանկարծ պահեստապետը չզլանա ժմեխը բաց թողնել: Պատերազմի տարիներին «չկա» բառը բոլորի շուրթերին էր, եթե որևէ մեկի տանը մի որևէ ուտեստ էր լինում, ուտում էին փակ դռների հետևում: Մարդիկ մոռացել էին, թե ինչ է ասել իսկական հացի բույրը»՝՝:

Կոլտնտեսականներին աշխատանքի դիմաց տրվում էր միջին հաշվարկով 400-500 գրամ հացահատիկ կամ էլ թխած հաց, որպեսզի գյուղացին կապված լիներ կոլխոզի աշխատանքներին: Հաճախ կոլտնտեսականները միայն ստորագրում էին այդ տեղեկագրերը, իսկ հացահատիկը տանում էր պետությունը՝ որպես կոլտնտեսականների օգնություն ռազմաճակատին: Գարնանացանից մինչև ուշ աշուն գյուղում սնվում էին կաթնամթերքով ու բուսական սնունդով:

«Գետափ» գրքի հեղինակ Հ. Ավետիսյանը գրում է. «Գյուղի երեխաների շրթունքները գարնանից ամառ կանաչ էին, նրանք «արածում էին» առվույտի դաշտերում ու այգիներում: Հունձը ավարտելուց անմիջապես հետո նրանք քաշվում էին խաղողի այգիներում ճնճղապաշար, սինձ, կրտոլա ուտելու: Շատերը թունավորվեցին. մի մասն հրաշքով փրկվեց, մի մասն էլ մահացավ: Ամռանը շատ երեխաներ շրջում էին հնձված արտերում, հասկ ու հատիկ հավաքում, երբեմն հում-հում ուտում, մինչդեռ այս երևույթը դատապարտվում էր, քանի որ նրանք պարտավոր էին հավաքած հասկն ու հատիկը

---

[25] Նույն տեղում, էջ101:
[26] Միրզոյան Ս., Փարաքար, Ե., 2005, էջ 274:
[27] Ասատրյան Մ., Արծվանիստ, Ե., 2006, էջ 192:

գյուղ բերել, հանձնել պահեստ: Գյուղում կային մեկ երկու դաժան չինովնիկներ, որոնք մտրակը ձեռքներին շրջում էին հանդերում, բռնում ու ծեծում սովալլուկ երեխաներին ու հավաքած հասկն ու հատիկը շաղ տալիս հրապարակում»[28]:

«Պատերազմի ահն ու սարսափը, ահավոր սովը հյուծել էին մարդկանց: Սովի ու համաճարակի զոհ դարձան հարյուրավոր մարդիկ: Մահանալուց հետո հաճախ օրերով մնում էին տանը: Թաղող չկար: Մարդիկ ուժ չունեին, որ գերեզմանափոս փորեին: Դագաղի մասին խոսք լինել չէր կարող: Մահացածներին թաղում էին գյուղի համար պատրաստված մի ընդհանուր դագաղով՝ նաշով: Դրանով մահացածին հասցնում էին գերեզմանափոսի մոտ, իսկ հետո նաշը դնում եկեղեցում, հաջորդ մեռելին թաղելու համար»[29]:

Այս ամենին գումարվեց նաև ռազմաճակատին օգնություն ցուցաբերելու կառավարության ձեռնարկած համաժողովրդական միջոցառումը: 1941 թ. աշնանից սկսվեց բանակի համար տաք հագուստի հավաքման գործընթացը: Հանրապետության աշխատավորները մեծ ջանասիրությամբ էին կատարում Կարմիր բանակի համար տաք հագուստի պատրաստման պատվերները: Պատերազմական առաջին ձմռան համար, ըստ պատվերների, բնակչությունը ռազմաճակատ ուղարկեց 528000 կտոր տաք հագուստ: Համաժողովրդական օգնությունը շարունակվեց պատերազմի ողջ ընթացքում: Հայաստանը ռազմաճակատ ուղարկեց 1մլն 113000 կտոր տաք հագուստ, 206000 անհատական ծանրոց՝ հիմնականում սննդամթերքով, և դարձյալ 45 վագոն սննդամթերք՝ տարբեր զորամասերի համար[30]: Պետության կողմից սահմանվեցին նաև փոխառություններ, որոնք է՛լ ավելի ծանրացրին գյուղացիության վիճակը, չհաշված 1941 թ. անբարենպաստ տարին: Այսպիսի պայմաններում խորհրդային գյուղացուն այլ բան չէր մնում, քան հերոսական ճիգերի գնով պահպանել իր չարքաշ գոյությունը:

Իհարկե, ոչ բոլոր գյուղերում էր վիճակը նման ծայրահեղ ողբերգական: Հացահատիկի մշակությամբ և արտադրությամբ աչքի ընկնող գյուղերում սովը սաստիկ չէր: Գյուղացիներն ամեն ինչ անում էին, որ գոնե իրենց երեխաները սովից լաց չլինեին: Ահա գյուղական առօրյայի մի նկարագիր. «1942 թ. Արին գյուղ էր եկել շրջկոմի քարտուղար Արամ Գրիգորյանը, միջնորդելու, որ Կեչուտի կոլտնտեսությանը հացահատիկ տան: Քարտուղարը գյուղամիջում տեսնում է մի երեխայի, որը լաց էր լինում: Նա, դիմելով գյուղի նախագահ Արամ Հարությունյանին, ասում է. «Մի տես էն երեխան ինչո՞ւ է լաց լինում»: Արամ Հարությունյանը, տեսնելով փոքրիկին, պատասխանում է. «Հացը ձեռքին է, լացում է՝ թող լացի»[31]:

Այնուամենայնիվ, եղան գյուղեր, որտեղ գրանցվեցին սովամահության դեպքեր: Օրինակ՝ Մարտունու շրջանի Գեղհովիտ գյուղում, եթե 1941 թ. գրանցվել էր 12 սովամահության դեպք, ապա

---

[28] Ավետիսյան Հ., Գետափ, Ե., 2005, էջ 78:
[29] Գևորգյան Դ., Թաղագյուղ, Ե., 1995, էջ 312:
[30] Հայոց պատմության հիմնահարցեր, հ. 4, Ե., 2010, էջ 588:
[31] Սիմոնյան Հ., նշվ. աշխ, էջ 149:

1945 թ. այն հասավ 75-ի[32]: Եղեգնաձորի շրջանի Գետափ գյուղի բնակիչ Մելքոնյան Գրիշան, որը 2 կգ ցորեն գողանալու համար դատապարտվել էր երկու տարի ազատազրկման, սովից մահացավ բանտում[33]: Կոտայքի շրջանի Գողթ գյուղից Սիմոնյան Ծիրունը 60 անց տղամարդ էր, սովից ծանր հիվանդացավ. որպես օգնություն նրան տվեցին 5 կգ հացահատիկ: Հիվանդը, երբ իմացավ, որ ջրաղացի քարի տակ է մնացել ալյուրի մի մասը, շատ վատ զգաց իրեն ու երկու օր անց մահացավ. այդ կես տոպրակ ալյուրն էլ տվեցին հոգու հաց: Նրա աղջիկը նույնպես սովից մահացավ, թաղող չկար:

Հարկ է նշել, որ կառավարությունը փորձում էր ձեռնարկել միջոցառումներ գյուղացիության խիստ ծանր դրությունը փոքր-ինչ մեղմելու ուղղությամբ: Ուշադրության կենտրոնում էին զինվորական ծառայողների ընտանիքները (1941 թ. հունիսի 26-ի հրամանագիրը նպաստ նշանակելու վերաբերյալ), Հայաստան տարհանված բնակչությունը (1942 թ. դեկտեմբերի 17-ի ՀԿ(բ)Կ Կենտկոմի որոշումը՝ նյութական օգնություն ցույց տալու մասին), հաշմանդամները (1942 թ. մայիսի 26-ի ՀԿ(բ)Կ Կենտկոմի որոշումը՝ աշխատանքով բավարարելու մասին)[34]:

Գյուղն առօրյա հոգսերի հետ ապրում էր նաև պատերազմի սարսափները: 1942 թվականից գյուղում սկսեցին երևալ պատերազմի առաջին հաշմանդամները, որոնք, որոշ ժամանակ ապաքինվելուց հետո, տեսնելով, որ տղամարդկային ուժի կարիք է զգացվում, անցնում էին կոլտնտեսությունում աշխատանքի: Աշխատավորության բարոյահոգեբանական վիճակի վրա մեծապես ազդում էին նաև ամեն օր ռազմաճակատից ստացվող «Սև թղթերը, որոնք, ինչպես գյուղացիներն էին ասում, «սև ագռավի» նման գյուղ էին մտնում և թևաթափ անում մարդկանց: Հաճախ, փոստային համակարգի վատթար վիճակով պայմանավորված, պատերազմից հաղորդվող լուրերը բավական ուշ էին գյուղ հասնում: Գեռ 1941 թ. դեկտեմբերի 11-ին Կոտայքի շրջանի աշխատավորների և դեպուտատների շրջանային խորհրդի գործադիր կոմիտեի նիստում Ի. Հովսեփյանը զեկուցում էր. «Արձանագրել, որ պատերազմի անցած ժամանակաշրջանում փոստը իր աշխատանքները պատերազմի օրերին համապատասխան չի վերակառուցել, որի հետևանքով փոստի աշխատանքների մեջ կան բավականին խոշոր թերություններ: Այն է՝ հեռախոսային ցանցը աշխատում է անկանոն, շատ գյուղերում հեռախոսները օրերով չեն գործում: Նույնպիսի վիճակում է նաև ռադիոցանցը: Ռադիոների անկանոն աշխատելու հետևանքով աշխատավորությունը հնարավորություն չի ունենում ժամանակին օգտվել հաղորդումներից: Թերթերի և նամակների ստացումը նույնպես կանոնավոր վիճակում չի գտնվում»[35]:

---

[32] Պողոսյան Վ., նշվ. աշխ., էջ 323:
[33] Ավետիսյան Հ., նշվ. աշխ, էջ 79:
[34] Սովետական Հայաստանը Հայրենական մեծ պատերազմի տարիներին (1941-1945 թթ.), Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Ե., 1975, էջ 202-204:
[35] ՀԱԱ Աբովյանի տարածքային ներկայացուցչություն, ֆ. 6, գ. 269, ց. 1, թ. 2:

Պատերազմի տարիներին հայկական գյուղերում, սննդի պակասից բացի, ամենատխուր փաստը հագուստ չունենալու իրողությունն էր: Այդ տարիներին տարածված էին «Հագուստի վրա հազար կարկատան կա» կամ «Մի թել քաշես, հազար կարկատան կընկնի» արտահայտությունները: Գյուղացին չգիտեր ինչ բան է կոշիկը, կաշվե տրեխներ քչերն ունեին:

Գողթի բնակիչ Տելեմակ Հովսեփյանը (ծնվ. 1927 թ.) հիշում է, որ պատերազմի տարիներին շատ ծանր էին ապրում: Երեք եղբայրները ռազմաճակատում էին, տանը մնացել էին ինքը, փոքր եղբայրը և երեք քույրերը: Ոտնաման չունեին, եզան չոր կաշվից չարուխ էին կարում ու հագնում, որը երբ չորանում էր, սեղմում էր ոտները և անհարմարություն պատճառում: Հետո, երբ ռեզինը հայտնվեց, շատ ուրախացան, որ եզան կաշվից կարված չարուխները իրենց ոտները էլ չեն սեղմի:

Վերահաս 1941 թվականի և դրան հաջորդած ձմեռներն էլ ամենասարսափելին էին: Տղամարդու ուժի բացակայության պայմաններում զգացվում էր վառելիքի սուր պակաս: Մարդիկ, ամենօրյա հոգսերի մեջ կքած, չէին հասցնում հոգալ ձմեռվա վառելիքի խնդիրները:

Մ. Ասատրյանը գրում է. «Ցրտից պատսպարվելու միակ տեղը կոլտնտեսության գոմերն էին: Մթությունից և ցրտից խուսափելով՝ մարդիկ հավաքվում էին թոնրի շուրջ, որից այն կողմ լույս էր արձակում մրոտ պատից կախված նավթի ճրագը: Լուցկին վաղուց վերացել էր: Ծծմբի լուծույթի մեջ թաթախված կանեփի ձողիկները միակ միջոցն էին բոց առաջացնելու համար»[36]: Բացի նրանից, որ գյուղերում դեռևս էլեկտրաէներգիա չկար, գործում էր նաև խիստ լուսաքողարկման կարգ:

Պատերազմի տարիներին բարվոք չէր նաև քաղաքային բնակչության վիճակը, որոնք սննդի խիստ պակասի պատճառով հաճախ գնում էին շրջակա գյուղեր՝ կոլտնտեսության աշխատանքներին մասնակցելու: Եթե մինչև պատերազմը գյուղից քաղաք փոխադրվող բնակչությունը մեծ թիվ էր կազմում, ապա պատերազմի տարիներին դիտվում էր հակառակ գործընթացը: Քաղաքային բնակչությունը զանգվածաբար տեղափոխվում էր գյուղ՝ մասնակցելու կոլտնտեսության աշխատանքներին, փորձելով այդ կերպ մեղմել իր ծանր վիճակը: Դրան է անդրադարձել «Ավանգարդ» թերթը, որը գրում էր. «Կիրովականի շրջանի Դարբազ գյուղի կոլխոզի դաշտերում երեկ արտակարգ եռուզեռ էր: Կիրովականից 70 կոմերիտուհիներ վաղ առավոտից խանդավառ կերպով օգնում են կոլխոզին, բերքահավաքը հաջող և առանց կորուստների կազմակերպելու համար: Այսօր 60 կոմերիտուհիներից բաղկացած մի խումբ էլ մեկնեց Վարդանլու գյուղի կոլխոզ՝ օգնելու բերքահավաքի աշխատանքներին»[37]:

---

[36] Ասատրյան Մ., նշվ. աշխ., էջ 193:
[37] Տե՛ս Ավանգարդ, 28.VII.1941:

Պատերազմի և զորահավաքի անխուսափելի հետևանք էր նաև ծնելիության անկումը, որի պատճառը բնակչության արական ներկայացուցիչների ռազմաճակատ մեկնումն էր, ինչպես նաև ամուսնացած կանանց զգալի մասի այրիանալը և շատ աղջիկների ու այրիացած կանանց ամուսնանալու հնարավորություն չունենալը: Ծնելիության անկումը խիստ բացասաբար անդրադարձավ բնակչության բնական աճի վրա: Եթե 1940 թ. բնակչության բնական աճը կազմում էր 27,4%, ապա 1950 թ. իջավ՝ կազմելով 23,6% էր[38]:

Պատերազմը և զորահավաքը մեծապես ազդեցին նաև կրթական համակարգի վրա: Ինչպես արդեն նշվեց, զորահավաքը իրականացվել էր առանց խտրության: Դպրոցներում աշխատող բոլոր տղամարդ ուսուցիչները և տնօրենները զորակոչվեցին բանակ, որոնց փոխարինելու եկան 7-8-ամյա միջնակարգ կրթությամբ կանայք, աղջիկներ և բանակային ծառայությանը ոչ պիտանի տղամարդիկ: Սրան ավելացան նաև երեխաների ոչ լիարժեք հաճախումները դպրոց. նրանք, լծված լինելով գյուղատնտեսական զանազան աշխատանքների մեջ, չէին կարողանում կանոնավոր հաճախել դպրոց: Դրա հետևանքով շատ գյուղերում ութերորդ և ավելի բարձր դասարանները փակվեցին:

Օրինակ՝ Ապարանի շրջանի Մելիք գյուղում 1940 թ. կառավարության որոշմամբ յոթնամյա դպրոցը միջնակարգի վերածելու նպատակով բացվել էր 8-րդ դասարան, սակայն 1941 թ. նորաբաց դասարանը փակվեց, որովհետև աշակերտները գնացին աշխատելու: Կոտայքի շրջանի աշխատավորների և դեպուտատների շրջանային խորհրդի գործադիր կոմիտեի 1941 թ. հուլիսի 29-ի նիստի որոշման համաձայն՝ շրջանի 13 միջնակարգ, 24 ոչ լրիվ և 6 տարրական դպրոցներից Արամուսի, Ողջաբերդի, Գողթի և Արզնիի միջնակարգ դպրոցները դարձան ոչ լրիվ, Աստղարերդի, Բեզաքլուի, Քյուլիջայի, Պտղնիի դպրոցները տարրական[39]:

Գետափի շրջկենտրոնում սովորող 42 աշակերտներից 1941-1945 թթ. միջնակարգը ավարտեցին միայն երեք՝ Գրետա Մկրտչյանը, Շուշիկ Ավագյանը և Հայկ Ավետիսյանը[40]: Դարդալուի յոթնամյա դպրոցում, եթե 1940-1941 թթ. յոթերորդ դասարանում սովորում էր 41 աշակերտ, ապա 1943-1944 թթ. նրանց թիվը խիստ կրճատվեց՝ հասնելով 15-ի[41]: Այս ամենը, բացասաբար անդրադառնալով դպրոցական համակարգի վրա, հանգեցրեց ընդհանուր կրթական մակարդակի անկման:

Այսպիսով, Հայրենական մեծ պատերազմի, համընդհանուր զորահավաքի և ամենամյա զորակոչերի հետևանքով խորհրդային գյուղացիության առօրյան արմատապես փոխվեց: Թիկունքում կյանքի կենսապայմանները դարձան բացառիկ ծանր և նույնիսկ արտա-

---

[38] Տե՛ս Ավետիսյան Խ., Սովետական Հայաստանի բնակչության և բնակավայրերի աշխարհագրություն, Ե., 1987, էջ 29:

[39] ՀԱԱ Աբովյանի տարածքային ներկայացուցչություն, ֆ. 6, գ. 269, ց. 1, թ. 2:

[40] Ավետիսյան Հ., նշվ. աշխ, էջ 80:

[41] Հովակիմյան Ա., Եղնիկ, Ե., 2004, էջ 135:

կարդ. մարդկանց առօրյա հոգսը դարձավ գոյության պահպանումը սովի և կիսասովի պայմաններում, պայքարը զանազան հիվանդությունների և ցրտի դեմ: Կարող ենք եզրակացնել, որ խորհրդային քաղաքացիների առօրյա գոյության հերոսական պահպանումը, փաստորեն, առասպել չէր, այլ տվյալ ժամանակաշրջանի մեծ իրողություն: Մարդիկ անասելի զրկանքների գնով կարողացան անել ամեն ինչ, որպեսզի ապահովեին թե՛ պետության և թե՛ բանակի օրավուր աճող պահանջները: Ահա թե ինչու չի կարելի տարբերություն դնել ռազմաճակատում կռվող մարտիկների և թիկունքում «Ամեն ինչ ռազմաճակատի համար, ամեն ինչ հաղթանակի համար» ստեղծելու համար պայքարող մարդկանց միջև:

Եվ թեև Խորհրդային Հայաստանը ռազմաճակատ չէր, բայց նրա յուրաքանչյուր բնակավայր, քաղաք և գյուղ դարձավ իսկական ռազմական ճամբար և յուրովի ապրեց պատերազմի արհավիրքը: Պատերազմը մեծ փորձություն դարձավ ոչ միայն խորհրդային պետության, այլև խորհրդային ժողովրդի համար, որն իր մաքառումներով, ազատագրության, հաղթանակի մասին իղձերով, զրկանքներով ու անձնուրաց աշխատանքով վաստակեց այդքան սպասված, բաղձալի հաղթանակը:

МОБИЛИЗАЦИЯ И БУДНИ СЕЛА (1941-1945 гг.)

ОВСЕПЯН Н. С.

Резюме

В результате войны коренным образом изменился быт советского гражданина. С первых же дней войны во всех населенных пунктах Советской Армении началась массовая мобилизация, осуществлявшаяся без каких-либо предварительных условий и дискриминаций. В результате мобилизации опустели армянские деревни. Мобилизация отразилась почти на всех сферах сельской жизни. Лишившись основной рабочей силы, женщины взяли на себя всю тяжесть сельских работ. В силу сказанного возрастал удельный вес вовлеченных в экономику женщин. В результате голода, унесшего десятки тысяч жизней, резко снизился уровень жизни населения. Отсутствие мужчин сказалось на уровне рождаемости, что в свою очередь явилось фактором сокращения естественного роста населения. Война и мобилизация негативно отразились на системе образования. Однако несмотря на создавшуюся тяжелую ситуацию, граждане Армении сделали все возможное, дабы обеспечить и государство, и растущие с каждым днем потребности армии.